ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 81

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30-ը մայիսի 2025թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2023թ.-ի հոկտեմբերի 7-ի նիստում հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգում լրացում կատարելու մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյան)

2. ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին (2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակ):

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական, ԿԲՈԱ բաժնի վարիչի պ/կ Ա.Հ. Մակարյան)

3. ԵՊՀ ԻՄ 2026թ. ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյան)

4. ԵՊՀ ԻՄ օտար լեզուների ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, Քրիստինե Դաղյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար՝ Մ.Ս. Աթոյան)

5. Ընթացիկ հարցեր:

5.1. ԵՊՀ ԻՄ-ում մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման համար վերապատրաստման (ուսուցման) դասընթացների (ծրագրի) կազմակերպման կարգը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ Ա. Ց. Դավթյան)

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ « ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2023թ.-ի հոկտեմբերի 7-ի նիստում հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգում լրացում կատարելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ.Մ. Օթարյանի հաղորդումը:

Մ.Մ. Օթարյանը առաջարկեց ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2023թ.-ի հոկտեմբերի 7-ի նիստում 68/2 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 5-րդ կետը լրացնել 9-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ. «9) նրան առաջադրած մարմնի որոշմամբ»: Նա նշեց, որ համապատասխան լրացումը վերաբերվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի անդամի լիազորությունը դադարեցնելուն: Ունեինք.

«Գիտական խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

1) ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահին (տնօրենին) տրված գրավոր դիմումի հիման վրա,

2) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում,

4) եթե դադարել են գիտական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները,

5) մեկ տարվա ընթացքում գիտական խորհրդի առնվազն երեք նիստից անհարգելի բացակայելու դեպքում,

6) որպես սովորող առաջադրվելու դեպքում սովորողի կարգավիճակը կորցնելու հետևանքով,

7) աշխատանքից ազատման դեպքում,

8) մահվան դեպքում,»

ավելացվել է՝

9) նրան առաջադրած մարմնի որոշմամբ։

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

Որոշում 81/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 1-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 1-ին կետի 2-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2023թ.-ի հոկտեմբերի 7-ի նիստում 68/2 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 5-րդ կետը լրացնել 9-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ. «9) նրան առաջադրած մարմնի որոշմամբ։»
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին (2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակ)» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական, ԿԲՈԱ բաժնի վարիչի պ/կ Ա.Հ. Մակարյանի հաղորդումը։

Ա. Մակարյանը նշվեց, որ ելնելով ԵՊՀ ԻՄ ռազմավարական նպատակներից՝ Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնն իրականացրել է 2024-2025 ուստարում մասնաճյուղի 4 ֆակուլտետների 34 մասնագիտական

դասընթացների շրջանակներում իրականացված հետազոտական աշխատանքների կազմակերպման վերլուծություն:

Հարցման նպատակն էր բացահայտել հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում ուսանողների մոտ ի հայտ եկած խնդիրները, հավաքագրել առաջարկներ հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման բարելավման ուղղությամբ, գրանցել նախորդ կիսամյակի հետ համեմատության դինամիկան, ակտիվացնել ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և խթանել ուսանող-բուհ համագործակցությունը:

Հարցաշարը ներառել է հարցեր, որոնց միջոցով հնարավոր է եղել պարզել ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքների բովանդակությունից և ռեսուրսներից, կատարած աշխատանքից, հետազոտական աշխատանքների կազմակերպումից և դրանց գնահատումից:

Հարցմանը մասնակցել է հետազոտական աշխատանք իրականացրած 154 ուսանողներից 86-ը (56%):

Վերլուծելով բոլոր տրված պատասխանները՝ ԿԲՈԱ բաժինն առանձնացրել է մի քանի հիմնական թեմաներ և առաջարկություններ, որոնք կօգնեն բարելավել հետազոտական աշխատանքի կազմակերպումը և գնահատումը:

1. Դասախոսների կողմից նյութերի տրամադրում.

- Առաջարկել դասախոսներին ուղղորդել ուսանողներին օգտվելու թիրախային մեթոդական գրականությունից, առավել հասանելի և հավաստի աղբյուրներից (այդ թվում՝ բաց հասանելիությամբ աղբյուրներից):

2. Խմբային հետազոտությունների խրախուսում.

- Կազմակերպել թեմատիկ խմբային հետազոտություններ, որոնք կներառեն այցելություններ համայնքներ, հարցազրույցներ, դիտարկումներ:

Հարցման արդյունքների առավել համակողմանի և օբյեկտիվ պատկեր ստանալու համար տնօրենը այն ֆակուլտետների դեկաններին, որոնցում ուսանողների մասնակցության տոկոսը փոքր էր, հանձնարարեց համապատասխան քայլեր ձեռնարկել մասնակցության ցուցանիշը բարձրացնելու ուղղությամբ:

Ա. Մակարյանի հաղորդումը ամբողջական կարող եք տեսնել **հավելված 1-ում**:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ.Օթարյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պ/կ բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, ուսանողներ ՈՒԽ նախագահ Դ. Ալեքսանյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Աբազյանը, ուսանողներ Մ. Փիրումյանը, Մ. Եղիկյանը, Մ. Վարդանյանը և այլք։

Մասնավորապես քննարկվեց խմբային աշխատանքների ճիշտ կազմակերպման և օբյեկտիվ գնահատման հարցը։ Նշվեց, որ թույլ ուսանողները քիչ աշխատելով կարող են ստանալ նույն բարձր գնահատականը, ինչ շատ աշխատած բարձր առաջադիմությամբ ուսանողը, որը կարող է առաջացնել դժգոհություններ ուժեղ ուսանողների մոտ և գոհունակություն թույլ ուսանողների մոտ։

Մասնավորապես Ա. Մակարյանը կարևորվեց, նաև խմբային աշխատանքերի ուժեղ կողմերը, մասնավորապես թիմային աշխատանքի և առաջնորդության ձևավորումը ուսանողների մոտ։ Ա. Մակարյանը նշեց, որ կարելի է խմբերի ղեկավարներին գնահատել ավելի բաձր, իրականացնել փոխադարձ գնահատումներ և այլ գնահատման ձևեր՝ գնահատման օբյեկտիվությունը ապահովելու համար։

Մ. Օթարյանը նշեց նաև, որ Հոգեբանություն մասնագիտությամբ սովորող ուսանողների պրակտիկաների արդյունավետությանը կարելի է բարձրացնել ԵՊՀ-ում գործող հոգեբանական կենտրոնների հետ համագործակցելով։

Նշվեց, որ այս հարցումները կարևոր են կրթական գործընթացի շարունակական կատարելագործման համար, և դրանց արդյունքները կնպաստեն դասավանդման որակի բարձրացմանը։ Առաջարկվեց ուսանողների շրջանում իրականացնել համապատասխան աշխատանքներ՝ հարցումներին նրանց մասնակցության բարձր ցուցանիշ և առավել օբյեկտիվ պատկեր ապահովելու նպատակով։

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի հաղորդումը «ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2023-2024 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» հարցի վերաբերյալ ընդունել ի գիտություն։

Օրակարգի երրորդ՝ «ԵՊՀ ԻՄ 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի հաղորդումը։

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք 13 անվանական կրթաթոշակ, որից 11-ը ԵՊՀ ԻՄ բյուջեի հաշվին, իսկ 2-ը արտաբյուջետային։ 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում անվանական կրթաթոշակի հավակնում է թվով 21 ուսանող, որոնք հիմնականում 4-րդ կուրս են։ Ֆակուլտետների գիտական խորհուրդներում քննարկվել են անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների թեկնածությունները։ Արդյունքում, հաշվի առնելով ուսանողների առաջադիմությունը, գիտական և հասարակական ակտիվությունը ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն ենք ներկայացնում 13 անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը (տես Հավելված 3), որոնց բոլոր փաստաթղթերը համապատասխանում են պահանջվող չափանիշներին։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը և այլք։

Մասնավորապես Մ. Օթարյանը նշեց, որ օբյեկտիվության մասով խնդիրներ չեն կարող լինել, որովհետև չափանիշները հստակ են և չափելի։ Իսկ Ն. Գրիգորյանը նշեց, որ հումանիտար գիտությունների ֆակուլտետում գործում է 7 կրթական ծրագիր, սակայն ֆակուլտետին հասանելի անվանական կրթաթոշակները քիչ են, լավ կլիներ յուրաքանչյուր կրթական ծրագրի համար տրվի անվանական կրթաթոշակ։

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 79/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 8-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1.Հաստատել 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, համաձայն **հավելված 3-ի**,

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

Օրակարգի չորրորդ `«Տնտեսագիտության ֆակուլտետի 2023-2024 ուստարվա հաշվետվությունն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026 ռազմավարական ծրագրի» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար՝ Ա.Շ. Մարգարյանի հաղորդումը:

Ա. Մարգարյանը նշեց, որ հաշվետու շրջանում ֆակուլտետը ցուցաբերել է կայուն առաջընթաց՝ դիմորդների և ուսանողների թվաքանակի աճի, ուսման առաջադիմության կայունության և կրթական ծրագրերի (ԿԾ) որակի բարելավման ուղղությամբ: Առկա են հաջողություններ դասավանդման մեթոդների նորարարության, էլեկտրոնային համակարգերի արդյունավետության բարձրացման և ուսանողների հետազոտական հմտությունների զարգացման ոլորտներում:

Ա. Մարգարյանը կարևորեց հետևյալ **ձեռքբերումները**.

- Դիմորդների թիվը հիմնականում համապատասխանում է պլանային ցուցանիշներին, հատկապես առկա ուսուցման համակարգում:
- Ակտիվ համագործակցություն է հաստատվել ՀՀ ԿԲ Դիլիջանի կենտրոնի և տարածաշրջանի զբոսաշրջային կազմակերպությունների հետ:
- Ուսանողների գիտական ակտիվությունը դրսևորվել է 20 գիտական հոդվածով, 2 ուսումնամեթոդական ձեռնարկով և 1 դասագրքով:
- Ֆակուլտետի 5 ուսանողներ ստացել են անվանական կրթաթոշակներ:

Իսկ **թերություններից և մարտահրավերներից** կարևորեց հետևյալ կետերը.

- «Զբոսաշրջություն» ԿԾ-ի դիմորդների ցածր ցուցանիշ:
- Հեռակա ուսուցման համակարգում ընդունելության և ուսանողների առաջադիմության նվազ ցուցանիշ:
- Ավագ սերնդի դասախոսների թվային հմտությունների պակաս:
- Շենքային պայմանների սահմանափակ հնարավորություններ:

Ա. Մարգարյանը կարևորեց հետևյալ առաջարկները և անելիքները**.**

- Կազմակերպել նախապատրաստական դասընթացներ դիմորդների համար:
- Խրախուսել հեռակա ուսուցման ուսանողների առաջադիմությունը հատուկ մեխանիզմների միջոցով:

- Աջակցել ավագ սերնդի դասախոսներին՝ թվային հմտությունների զարգացման հարցում:
- Շարունակել ԿԾ-երի բարելավման գործընթացը՝ հիմնվելով աշխատաշուկայի պահանջների վրա:
- Կազմակերպել գիտաժողովներ արդի հիմնախնդիրների վերաբերյալ:
- Ակտիվացնել կապը շրջանավարտների հետ՝ օգտագործելով ժամանակակից տեխնիկական միջոցներ:

Ա. Մարգարյանի ամբողջական զեկույցը կարող եք տեսնել **հավելված 4-ում**:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, գիտքարտուղար Մ. Աթոյանը, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը և այլք:

Արտահայտվողները ընդհանուր առմամբ կարևորեցին այն հանգամանքը, որ Ֆակուլտետն ընթանում է զարգացման կայուն ուղով՝ պահպանելով որակյալ կրթության ապահովման ռազմավարությունը: Սակայն առկա մարտահրավերները՝ հատկապես հեռակա ուսուցման և թվային հմտությունների զարգացման ոլորտներում, պահանջում են անհապաղ ուշադրություն: Դիմորդների ներգրավման, ԿԾ-երի բարելավման և ակադեմիական կազմի հմտությունների զարգացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը կարևոր են կրթական ծրագրերի մրցունակության և ուսանողների հաջողությունների ապահովման համար:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 79/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 11-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Ալեքսան Մարգարյանի 2023-2024 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար։
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Ալեքսան Մարգարյանի հաղորդումը «Տնտեսագիտության ֆակուլտետի 2023-2024 ուստարվա հաշվետվությունն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026 ռազմավարական ծրագրի» հարցի վերաբերյալ ընդունել ի գիտություն։

Օրակարգի հինգերորդ՝ «Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2023-2024 ուստարվա հաշվետվությունն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026 ռազմավարական ծրագրի» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար՝ Ն.Ս. Գրիգորյանի հաղորդումը։

Ն. Գրիգորյանը նշեց, որ Ֆակուլտետն ունի 346 առկա և 215 հեռակա ուսանող, իրականացնում է 7 կրթական ծրագրերով ուսուցում. պատմություն, հայոց լեզու, օտար լեզուներ, հոգեբանություն, մանկավարժություն և այլն։ Ուսանողների առաջադիմությունը կազմել է 87.9%։ Ակադեմիական համակազմը ներառում է 6 պրոֆեսոր և 40 դոցենտ։ Ֆակուլտետն ունի 4 ամբիոն՝ հայոց պատմության, հայոց լեզվի, մանկավարժության և օտար լեզուների։

Գիտական աշխատանքներով հրապարակվել է 72 հոդված, 5 ուսումնական և 2 մեթոդական ձեռնարկ։ Մասնակցել են 7 հանրապետական և 14 միջազգային գիտաժողովների։

2024թ. ավարտել են 251 առկա և 164 հեռակա ուսանող։ Կարմիր դիպլոմ ստացել է 19 առկա և 1 հեռակա ուսանող։

Նշվեց, որ հիմնական դժվարությունները ներառում են ուսանողների ցածր մոտիվացիան, Moodle համակարգի ոչ ամբողջական կիրառումը, տեղացի կադրերի պակասը։

Հաջողություններից է Erasmus+ ծրագրով ուսանողի ուսումնառությունը Լեհաստանում, ինչպես նաև Ռուսաստանում գիտական ստաժավորում անցած դասախոսի հրապարակած հոդվածը։

Հաջորդ քայլերի շարքում են՝ ավելի ակտիվ աշխատանք տարածաշրջանի դպրոցների հետ, կրթական ծրագրերի բարելավում, միջազգային համագործակցությունների ընդլայնում, գիտական սեմինարների կազմակերպում:

Կարևորվեց նաև ուսանողների հոսունության խնդիրը: Օրինակ՝ «Պատմություն» մասնագիտությամբ առկա ուսուցման դեպքում վերականգնվել է 4 ուսանող, տեղափոխվել՝ 3 ուսանող, հեռացվել՝ 2 ուսանող: Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար ֆակուլտետում ապահովված է անհատական մոտեցում՝ առանձին աշխատանքների և դասախոսների հատուկ ուշադրության շնորհիվ: Գործատուների հետ համագործակցությունը հիմնականում կազմակերպվել է պրակտիկաների շրջանակներում՝ տարածաշրջանի դպրոցների, քոլեջի, մանկապարտեզների և այլ կազմակերպությունների հետ: Այնուհետև Ն. Գրիգորյանը նշեց նաև լսարանային ֆոնդի օպտիմալ բաշխման խնդիրը, որը հետևանք է համեմատաբար շատ կրթական ծրագրեր ունենալու և ըստ առկա նորմատիվների խմբերի տրոհմանը:

Ն. Գրիգորյանի ամբողջական զեկույցը կարող եք տեսնել **հավելված 5-ում**:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա. Մարգարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Սիմոնյանը և այլք:

Ռ. Բարխուդարյանը նշեց, որ լսարանների բաշխման խնդիրները առկա են նաև Երևանում: Ա. Դավթյանը փաստեց, որ ֆակուլտետում բոլոր խմբերը ձևավորվել են համաձայն գործող չափորոշիչների: Մ. Օթարյանը նշեց, որ կարելի է ձևավորել հանձնաժողով, ֆակուլտետում առկա խնդիրները լուծելու համար:

Ընդհանուր առմամբ նշվեց, որ ֆակուլտետն ունի զարգացման լավ նախադրյալներ, սակայն պետք է լուծել մի շարք կառուցողական խնդիրներ:

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 79/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 11-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

աշխատակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի նախկին պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Կարինե Պողոսյանի 2023-2024 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար։

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար պ.գ.թ., դոցենտ Ն.Ս. Գրիգորյանի հաղորդումը «Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2023-2024 ուստարվա հաշվետվությունն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026 ռազմավարական ծրագրի» հարցի վերաբերյալ ընդունել ի գիտություն։

Օրակարգի վեցերորդ՝ «ԵՊՀ ԻՄ 2025-2026 ուստարվա ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) հաստատելու մասին» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն՝ Մ.Մ. Օթարյանի հաղորդումը։

Նա մասնավորապես նշեց, որ հարցը քննարկվել է ԵՊՀ ԻՄ տնօրենության՝ 2025 թ. հունվարի 18-ի նիստում: Եվ հաշվի առնելով տարածաշրջանի բնակչության սոցիալական վիճակը և սահմանամերձ մարզին բնորոշ այլ հանգամանքներ՝ որոշվել է առաջարկել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին ոչ մեծ (20.000-30.000 դրամ) չափով փոփոխություններ իրականացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ 2025-2026 ուստարվա ուսման վճարների չափերում (տես հավելված 6), որպեսզի հնարավորություն ունենանք ապահովել որակյալ կրթություն, որի համար անհրաժեշտ են որակյալ կադրեր համապատասխան վարձատրությամբ։ Այնուհետև Մ. Օթարյանը ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ ՀՀ բուհերի մեջ ԵՊՀ ԻՄ ուսման վճարները ամենացածրն են։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ժ/պ Վ. Աղաբաբյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Սիմոնյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Աբազյանը և այլք։

Մասնավորապես Ս. Աբազյանը նշեց, որ ընդհանուր առմամբ դեմ չեն նշված չափով բարձրացումներին, սակայն «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրով դիմորդների և ուսանողների քանակը Մասնաճյուղում շատ քիչ է, այդ մասնագիտությամբ չունենք մանկավարժի որակավորում, հետևաբար ճիշտ կլիներ այդ մասնագիտությամբ վարձավճարները թողնել նույնը։

Մ. Օթարյանը նշեց, որ աշխատանքներ տարվում են այս մասնագիտությամբ ևս՝ մանկավարժի որակավորում տալու համար, ձեռնարկվում են նաև այլ միջոցառումներ ուսանողների թվաքանակը այս մասնագիտությամբ մեծացնելու համար, իսկ մյուս կողմից այս մասնագիտության վարձավճարները մեզ մոտ ամենացածրն են և ֆինանսապես շահավետ չեն։

Նշվեց, նաև, որ Մասնաճյուղում առկա է մագիստրոսական ծրագիր մանկավարժի որակավորմամբ, ինչպես նաև տարվում են աշխատանքներ մանկավարժի որակավորմամբ բակալավրի կրթական ծրագրերի քանակը մեծացնել։

Այնուհետև առաջարկեցին հաստատել ԵՊՀ ԻՄ 2025-2026 ուստարվա ընդունելության ուսման վարձավճարների չափերի նախագիծ համաձայն հավելված 6-ի:

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 4 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 79/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 3-րդ և 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 3-րդ և 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2025-2026 ուստարվա ընդունելության ուսման վարձավճարների չափերը՝ համաձայն հավելված 6-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից։

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 4 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 79/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2025-2026 ուստարվա ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների՝ համաձայն հավելված 7-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ